

2456

491.99-5

F-31

491.99-5
F-31

4

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԻ

Ա


ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՅԱՐԱԼԻԶԱՅ

ԵՒ ԲԱՐԵԼՍՅՈՅ ՄԵՐՈՎԳԱՔԻ

Բ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՎԱՆԱՅ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՎՐԱՅ



ԳՐԵՅ Կ. Յ. ԲԱՍՄԱԶԵԱՆ



2002

ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1898

2010

491.99-5

F-31

49

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԳԻՍԻ

Ա

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՅԱՐԱԼԻԶԱՅ

ԵՒ ԲԱԲԵԼԱՑԻՈՅ ՄԵՐՈՎԴԱՔԻ

Բ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՎԱՆԱՅ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՎՐԱՅ

ԳՐԵՅ Կ. Յ. ԲԱՍՄԱԶԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1898

50+

400
~~2596~~ ԲԱ
18

1009
8365

12464



Ա

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՅԱՐԱԼԻԶԱՅ

ԵՒ ԲԱՐԵԼՍՅՈՑ ՄԵՐՈՎԴԱՔԻ



ԸՆԹԱՑՍ մեր ազգային պատմութեան երկու անգամ յիշատակուած են միայն Առէզք կամ աւելի ճիշդն Յարալէզք. մին՝ Արայի գէպքին մէջ, երբ Շամիրամ զիղեցիկն Արայի անկումն ու Հայոց բարբոսը տեսնելով գոչեց. «Հրամայեցի ատուածոցն իմոց լեզու զվերս նորա, և կենդանացի նասցի». բայց երբ տեսաւ որ կենդանութեան նշան ցոյց չի տար, անոր գիակը խոր փոսի մը մէջ նետել տալէն յետոյ, իւր հոմանիներէն մին Հայոց ցուցնելով բտաւ. «Լիզեալ ատուածոցն զԱրայ և կենդանացեալ լցին զփափագ մեր...»: Ապա Շամիրամ «կանդնէ և նոր իմն պատկեր յանուն զիւաց, և մեծապէս զոհիւք պատուէ. ցուցանելով ամենեցուն, իբր թէ այս զօրութիւն աստուածոցն կենդանացոցին զԱրայ». (Խոր. Ա, ԺԵ): Իսկ երկրորդ յիշատակութիւնն եղած է Մուշեղի գէպքին մէջ. այսպէս՝ «Իբրեւ

տարան զմարմին սպարապետին Մուշեղի ի տուն իւր, ոչ հաւատային ընտանիք նորա մահուն նորա, թէպէտ և տեսանէին զզլուխ նորուն զատ ի մարմնոյն անտի. զի ասէին. Դորա յանթիւ ճակատ մտեալ էր, և վեր երբեք չէր առեալ. ոչ նետ մի զլպեցաւ երբեք, և ոչ այլոց զինու խոցեալ է զգա: Իսկ կէսը յառնելոյ ակն ունէին նմա. մինչեւ զզլուխն անդէն ի կոճեղն կարեալ կցեցին, և հանին եզին ի տանխն աշտարակի միոյ, ասէին՝ թէ վասն զի այր քաջ էր, առէզք իջանեն և յարուցանեն զգա: Պահապան կային և ակն ունէին յառնելոյ, մինչեւ նեխեցաւ մարմինն: Ապա իջուցին յաշտարակէ անտի, և լացին թաղեցին գնա որպէս օրէն էր». (Բուզ. Ե, 19):
Վանական վարդապետ կը սխալի երբ «Յարալէզ կոչէ և համարի մեր ուրիշ և նորագոյն առասպելաւանդ թագաւորի մի՝ Արաւազգայ երկու Շուներն, Սեա և Սպիւ

Արմենի, ծագմամբ պամփիլիացի, որ՝ ըստ
 Հանդուայի (անդ) և Մ. Էմինի՝ (Խոր. ուս.,
 երես 254 և 255) նոյն է մեր գեղեցիկին Ա-
 րայի հետ: Պղատն կ'ըսէ թէ այս Յէր (Ἡρδός)
 պատերազմի մը մէջ ինչպէ՛ն տասն օր յե-
 սոյ՝ երբ փառած զիսկները կը վերցունէին,
 անոր մարմինն առողջ և անաղարտ գտան.
 և ապա իւր սուներ տանելով՝ երկոստասներ-
 րորդ օրն երբ խարակի վերայ գրին, կեն-
 դանացաւ ու պատմեց ներկայից ինչ որ տե-
 սած էր հանդերձեալ աշխարհին մէջ. 'Αλ-
 λ'οὐ μέντοι σοι, ἦν δ'εἰγώ, 'Αλκίνοῦ γε ἀπό-
 λογον ἔρω, ἀλλ'ἀλκίμου μὲν ἀνδρὸς, 'Ἡρδός,
 τοῦ Ἀρμενίου, τὸ γένος Παμφύλου· ὅς ποτε
 ἐν πολέμῳ τελευτήσας ἀναιρεθέντων δεκα-
 ταίων τῶν νεκρῶν ἦδη διεφθαρμένων ὑγιῆς
 μὲν ἀνηρέθη, κομισθεὶς δὲ οἴκαδε μέλλων
 θάπτεσθαι δωδεκαταῖος ἐπὶ τῇ πυρᾷ κείμε-
 νος ἀνεβίω, ἀναβιούς δ'ἔλεγεν ὁ ἐκεῖ ἴδου.
 (ΠΛΑΤΩΝ, Πολιτεία, Ժ):

Ո՞վ էր Մարդուկ. — Մարդուկ (Mar-
 duk)՝ Ս. Գրոց 𐤌𐤍𐤊 (ըստ մեզ «Մե-
 րովաք», զոր սեռ էրեմ. Ծ, 2) աստուածն
 է և Ասորբաբելացոց երկրորդական աս-
 տուածներէն մին, որ ապա Բաբելոնի դը-
 խաւոր աստուածը դարձաւ, այնպէս որ մինչ-
 չե իսկ շփոթել սկսան զայն Բէլի հետ:
 (Հմտ. MASPÉRO, Hist. anc. des peup-
 les de l'Orient. Paris, 1893, երես
 144): Այս շփոթութիւնը գլխաւորապէս
 յառաջ եկած է անկէ՝ որ Մարդուկ Բաբել-
 ւոնի տէրը կը համարուէր, և այս պատճառա-
 իւր բուն անունէն զատ զինքն կը ճանչնային
 Բէրոս = «տէր» անուամբ եւս, որ զիւ-
 րաւ կրնար շփոթուիլ բուն Բէրոս = «Բէլ»
 աստուծոյ հետ: Բաբելոնի կործանման նը-
 կամամբ Երեմիայի մարգարէութենէն իսկ
 գիտենք՝ թէ Բէլ և Մարդուկ սարբեր աս-
 տուածներ էին, բայց երկուքն ալ յարգի առ
 Բաբելացիս. — «Պատմեցէք յազգս՝ և լու-
 արարէք, նշան կանգնեցէք, շտելի արարէք.
 մի ծածկիցէք, աստալիք առ Բաբելոն. յա-
 մօթ եղև Բէլ. փափուկքն աներկիւղք. մատ-
 նեցաւ Մերովաքը, յամօթ եղևն կուռք նո-
 րա, ամաչեցին գարշելիք նորա»: (Երեմ.
 Ծ. 2):

Բաբելաստանի մէջ՝ Էգիպտոսի նման՝
 աստուածոց աւատականութիւն մը կար: Այս
 աստուածներն իրարու հետ զաշնակցելով տե-
 սակ մը աստուածային զաշնակցութիւն կը
 կազմէին, որուն կը նախագահէր ամենակարող
 և գերագոյն երրորդութիւնն — Անու, Բե-
 ռոս և Էա: Յետոյ կու գար երկրորդ երրոր-
 դութիւն մը — Սիւն = «Լուսին աս-
 տուած», որ կը համագատաստանէ տուսպ-
 կան արձանագրութեանց «Խալդի»ին, Եա-
 մաշ = «Արեգակն աստուած», որ կը հա-
 մագատաստանէ տուսպական արձանագրու-
 թեանց «Արդինի»ին, Ռաւակ = «Օդ
 աստուած», որ կը համագատաստանէ նոյն
 արձանագրութեանց «Տէլիբա»ին: Այս եր-
 կրորդ երրորդութեան կը յաջորդեն հինգ ու-
 րիշ աստուածներ, որոնք մուրախաց իբրու
 պահապան ճանչցուած էին, — Եիւիպ՝ Ե-
 րևակի, Մարդուկ՝ Լուսնթաղի, Եերգալ՝
 Հրատի, Իշտար՝ Արուսեակի և Եարոս՝
 Փայլածուի:

Արդ, ինչպէս տեսանք վերը Լանդուայի
 ըսածն Յարալէզներու մասին՝ թէ երկրոր-
 դական աստուածներ են, — «dieux se-
 condaire», — այսպէս նաև հոս ալ կը
 տեսնենք՝ թէ Մարդուկ երկրորդական աս-
 տուածոց գտնէն է: Բայց Եիւիուկի կործա-
 նումէն յետոյ Բաբելոն ծաղկեցաւ, և Մե-
 րովաք՝ Նաբոպոլասարի և Նաբուքոդոնոսորի՝

1. Սխալ է Նաբուքոդոնոսոր ձեւն, զի առանց
 կարեւորութիւն տալու որ Ս. Գրոց եօթանասնից
 թարգմանութիւնն ունի Ναβουχοδονόσορ, որուն
 կը համեմատին Բէշիտոն, Վուլգատան և եբ-
 րայական բնագրին քանի մը (Թագ., Երեմ.,
 Եսթ. և Գան.) զրոց մէջ 𐤍𐤃𐤁𐤎𐤏𐤃𐤏𐤃𐤏
 ձեւն, նոյն եբրայական բնագրին ուրիշ տեղերն (Երեմ.,
 Եղեկ. և Եղր.) հշգիւ գրուած կայ 𐤍𐤃𐤁𐤎𐤏𐤃𐤏𐤃𐤏
 ձեւով: Այսպէս հիշք ունի նաև Սորբոսն —
 Ναυσοδορόσορος. Գալուզ ասորեկոստանեան արձա-
 նագրութեանց, հոն ևս հշգիւ կը գտնենք Նա-
 բոս-կոդոնոսորի-նոցոնը ձեւով, որ կը նշանակէ
 «Նաբու աստուածն իմ՝ գահս կը պաշտպա-
 նէ», ինչպէս արդի գրամներէն ոմանց վրայ,
 դ. օր. ֆրանսիականին՝ Dieu protège la Fran-
 ce: Ուրեմն ուղղագոյն ձեւն է Նաբուքոդոնո-
 սոր: Այս սխալումն յառաջ եկած է եբրայեցի

ժամանակ Բաբելաստանի աստուածոց ամե-
 նակարողն եղաւ. մինչեւ իսկ Նաբունահիդ
 փորձեց իւր պետութեան միակ և գերագոյն
 աստուածն ընել, ինչ որ էր Անուր Աստ-
 րեստանի համար. այս նպատակաւ իւր եր-
 կրին բոլոր աստուածներն հաւաքելով Բաբել-
 ւոն տարաւ ու գետեղեց Մերովաքի բոլոր-
 տիքն: Բայց այս բանը ժողովրդեան և մա-
 նաւանց քրմաց շատ հաճելի չեղաւ, ուստի
 այս վերջիններուն զրգմամբ ժողովուրդն ապրա-
 տամբեցաւ Նաբունահիդի գէմ, որով Պար-
 սից յաղթանակը գիւրացաւ և Կիւրոսի ձե-
 ուամբ վերջ գտաւ Բաբելաստանի վերջին
 հարստութիւնն (538 Ն. Ք.) ու Մերովաքի
 կարճատեւ գերելիանութիւնն:

Թէ այս անկումէն յետոյ տակաւին կը
 պաշտուէր Մարդուկ, — այսչափ կրնանք
 ըսել՝ թէ Սրճեցոյ ժամանակ Խառանի մէջ
 կար տակաւին կոպաշաուութիւնն և աստե-
 զապաշաուութիւնն, որ Բաբելացոց մնացած
 էր և զոր կը պահպանէին Սարէացիք. այս
 կոց մէջն էր անշուշտ և Մարդուկ, որուն
 կ'ակնարկէ Սրճեցի իւր վերի խօսքերով:
 Այսպէս նա և առ մեզ կը գտնենք անոր
 հետքն մինչեւ քրիստոնէութեան Գ. դարուն
 վերջերն, Մուշեղի գէպրին մէջ ըստ Բու-
 գանդայ, ինչպէս տեսանք վերը:

Այս ամէնէն կրնանք հետեցնել, թէ
 Ասորբաբելացոց Մարդուկն իւր շորս հե-
 տեարդ շներով անցած է Հայոց, և իրենց բուն
 անուան տեղ՝ իրենց կասարած գործողու-
 թեան պատճառաւ՝ կոչուած են ետրէն «Յա-
 րալէզք» = յար լիզողք:

Մարդուկ պահապան ըլլալով Լուսնթաղի
 և իրեն ընծայուած բարձր պաշտօնին հա-
 մար կրնայ համեմատուիլ Յունաց Չեւսին
 հետ, որ է Պարսից Անուրո մագդան և մեր
 Արամագդն. մանաւանդ որ Յունաց և Հուով-

գաղափարողներու անուշադրութենէն, որով Դ
 (րեշ) տառն Ե (կռն) տառին հետ շփոթելով
 երկու ձեւերն ալ գործածած են, թէ և բացար-
 ձակապէս կ'երևայ թէ նախնական բնագրին ան-
 պատճառով գրուած պէտք է լինի ինչպէս
 կ'ենթադրէ ասորեկոստաներէն ձեւն և անուանը
 նշանակութիւնն:

մայեցոց մէջ Ζεύς = Jupiter նոյնպէս
 պահապան կը նկատուէր Լուսնթաղի. բայց
 այս երկուքին մէջ եղած տարբերութիւնը
 սա է՝ որ Արամագդ «արարիչ երկնի և եր-
 կրի» (Արամ. Ե) էր, մինչդեռ Մարդուկ
 էր «կենդանացուցիչ զիականց», ինչպէս տե-
 սանք վերն: Իսկ Բրիտանական Թանգարանին
 ասորերէն ձեռագրերէն միոյն համեմատ (որ
 կը խօսի քիմիարարութեան (alchimie) վը-
 րայ, և ուր մետաղաց անուանք կցուած են
 ոչ միայն իրենց համագատաստական մուրա-
 կաց, այլ նա և բաբելական աստուածոց) «ա-
 նագ»,ը նշանակուած է Չեսով և միանգամայն
 Բէլով: (Հմտ. Berthelot, La chimie
 dans l'antiquité, ի Հանդիսին Revue
 des deux mondes, 1893, երես 335):
 Ուրեմն՝ ըստ ձեռագրին Անագ = Լուսն-
 թագ = Չես = Արամագդ = Բէլ է, և
 ոչ թէ Մարդուկ. բայց ինչպէս վերը՝ նոյնպէս
 հոս Բէլ շփոթուած է Մարդուկի հետ. ուս-
 տի՝ այստեղ Բէլ ըսելով անշուշտ՝ պիտի
 հասկընանք Մարդուկը միայն:

* *

Երկայ աշխատութիւնս վերջացնելու և
 տպագրութեան յանձնելէս ետքը՝ տեսութիւն
 մը ունեցայ Ուսուցչապետ Պրն. Յ. Հալէ-
 վիի հետ, որուն յայտնեցի Յարալէզներու
 և Մարդուկի նկատմամբ ունեցած կարծիքս:
 Սեմազէտ բարեկամս իւր հաւանութիւնն
 յայտնեց, և այս առթիւ նիւթ մը առաջար-
 կեց ինձ ուսումնասիրելու համար. այն է թէ՛
 «Պերսեպոլոսոյ բեւեռագիր արձանագրութեանց
 մէջ կը յիշուի Արախ անուամբ հայ մը, որ
 Բաբելացիները գրգռելով Պարսից գէմ՝ պա-
 տերագմած է այս վերջնոցս հետ: Արդ չի՞
 կրնար ըլլալ որ հայ պատմագիրներէն յի-
 շուած Արայն, որ Ասորեստանեայց (Շամի-
 րամի) հետ պատերագմած է, Պերսեպոլոսոյ
 արձանագրութեանց մէջ յիշուած Արախն ըլ-
 լայ: Պատմութեան մէջ, արձանագրութեանց
 յիշում, գոյութիւն ունի Արախ մը. ասիկա
 անուրանալի է. բայց Շամիրամայ հետ պա-
 տերագմող Արայ մը՝ երեւակայական և կեղծ
 միայն կրնայ ըլլալ, քանի որ նոյն ինքն



Շամիրամ առասպելական անձնաորութիւն մըն է : Ուստի հայ պատմիչք, բերնէ բերան ստարածուած Արախի պատմութիւնն՝ իբրեւ հայ թագաւորի մը պատմութիւն, իրենց գրուածոց մէջ անցուցած են. և որովհետեւ Աքեմենեանց հարստութիւնը շատոնց դադրած էր հայ պատմագրաց գոյութեան ժամանակ, և աւանդութիւնն ալ կ'ըսէր թէ Արախ գործ ունեցած է Բաբելոնացոց հետ, հայ պատմագիրք՝ Բաբելոնացոց տեղ Ասորեստանցիները գրած են մէջ տեղ և անոնց հետ պատերազմեցուցած Արախն, որուն ահուան վերջին կտորգային տառն (ս) ինկած էր արդէն ժամանակին ընթացքով և եղած Արա » :

Յարգելի բարեկամիս այս դիտողութիւնն ուշադրութեան արժանի գտաւելով՝ կրկին և կրկին անգամներ կարգացի վերայիշեալ Արախի պատմութիւնն, բայց ոչ Պերսեպոլսոյ արձանագրութեանց մէջ, այլ Բեհիստունի երեքընդուեան (հին պարսկական, մարական և ասորեստանեան) բեւեռագիր արձանագրութեանց մէջ : Ահա Բեհիստունի ընդարձակ արձանագրութեան այս մասն.

« Ասէ Դարեհ արքայն. իմ Պարսկաստան և Մարաստան գտնուած միջոցիս՝ Բաբելոնացիք երկրորդ անգամն ըլլալով կը բաժնուէին կուսակցութենէս : Արախ անուամբ մարդ մը, (ազգաւ) հայ, որդի Հալդի-տայի¹, Բաբելոնը գրգռեց. Դուրբաւ ահուն գաւառն ապստամբեցուց՝ այսպէս սուս խօսելով. « Ես Նաբուգոդոնոսորն եմ, որ զին Նաբոնիտի », Այն ասէն Բաբելոնցիք ոտքի ելան և այս Արախն՝ որ Բաբելոնէն

1. Այս հասուածն այսպէս գրուած է աքեմենեան ընդգրկին մէջ. 1 Մարտիչս Արախս նանս Արախիչս Հայդիտահչս պոռտրս = « Ա մարդ, Արախ անուն, Հայ, Հալդիտայ որդի ». Իսկ մարական ընդգրկին այսպէս ունի. Բոռն կիր Արախկս հիշէ Հարախիչարկիր Հայդիտաշարրի = « Մարդ մը Արախ անուն, Հայ մը, Հալդիտայ որդի »: Ասորեստանեան բնագրերը քիչ մը կը տարբերէ, այսպէս. Նիշոռ Արախոռ ապաղ Խարդիտա = « Ոմն Արախ, որդի Խալդիտայ », առանց Հայ ըլլալն ըսելու :

« կ'անցնէր, արքայ հոչակեցին Բաբելոնի » : (Տխա. Գ, տող 13) :

« Ասէ Դարեհ արքայն. Ուստի գորախումբեր զրկեցի Բաբելոն : իմ ծառայներէս վինդափրա անուն Մարացի մը հրամանաւ տար զնելով բանակաց՝ զրկեցի այսպէս ըսելով. « Գնա և զրուէ ապստամբ բանակն, որ զիս չի ճանչնար ի Բաբելոն », « վինդափրա իր զօրքերով Բաբելոնի վրայ արշաւեց : Արամագ ինձ օգնեց : Շնորհիւ Արամագի վինդափրա Բաբելոնի զօրքերը զրուեց և զմանս զերի վարեց : Անոնց հետ ապստամբած Ժողովուրդն՝ ինձ հնազանդեցաւ : Քսաներորդ երկրորդ օրն մեռաւ : Գնա և զրուէ ապստամբ բանակն, որ զիս չի ճանչնար ի Բաբելոն », « վինդափրա իր զօրքերով Բաբելոնի վրայ արշաւեց : Արամագ ինձ օգնեց : Շնորհիւ Արամագի վինդափրա Բաբելոնի զօրքերը զրուեց և զմանս զերի վարեց : Անոնց հետ ապստամբած Ժողովուրդն՝ ինձ հնազանդեցաւ : Քսաներորդ երկրորդ օրն մեռաւ : Գնա և զրուէ ապստամբ բանակն, որ զիս չի ճանչնար ի Բաբելոն », « վինդափրա իր զօրքերով Բաբելոնի վրայ արշաւեց : Արամագ ինձ օգնեց : Շնորհիւ Արամագի վինդափրա Բաբելոնի զօրքերը զրուեց և զմանս զերի վարեց : Անոնց հետ ապստամբած Ժողովուրդն՝ ինձ հնազանդեցաւ : Քսաներորդ երկրորդ օրն մեռաւ : Գնա և զրուէ ապստամբ բանակն, որ զիս չի ճանչնար ի Բաբելոն » : (Տխա. Գ, տող 14)¹ :

Արախի այս ապստամբութիւնը պատահած է 543 թուին (Ն. Ք.), ըստ յիշատակարանաց. ուստի մեր ազգային պատմագիրներն զարերով յառաջադնն. սակայն եթէ համեմատենք զայն Պղատոնի վերայիշեալ Էրին հետ, գրեթէ ժամանակակից կը զտնենք երկուքն ալ, նկատելով որ Պղատոն ապրած է 429—347 (Ն. Ք.) : Արդ, կամ այն է որ Բեհիստունի արձանագրութեանց մէջ յիշուած Արախը մեր պատմագրաց Արայն և Պղատոնի Էրը չէ, և կամ այն է որ Պղատոնի Էրը Բեհիստունի Արախն և մեր Արայն չէ : Ես աւելի առաջին կարծիքէն եմ. վասն զի եթէ Բեհիստունի Արախը մեր Արայն և Պղատոնի Էրն ըլլար, Պղատոն չպիտի բէր թէ Էր « պատերազմի մը մէջ մեռնելէն յետոյ . . . փտած զիակ-

1. Արձանագրութեան վերջին մասը, Դարեհին արձակած վճիռն և Արախի սպաննուելը, կտորած է աքեմենեան ընդգրկին մէջ. ուստի ես ամբողջացուցի այս մասն՝ ասորեստանեան ընդգրկին հետեւելով :

ներու մէջ գտնուեցաւ անոր մարմինն » . այլ պիտի ըսէր, ըստ Բեհիստունի արձանագրութեան, թէ Արախ « ձերբակալուեցաւ . . . (Դարեհին) բերուեցաւ : Արախ և իւր զլխաւոր գործակիցք ի խաչ հանուեցան Բաբելոնի մէջ : Ահա այսպէս մեռան », և ոչ « պատերազմի մը մէջ . . . » :

Ընդունելով որ մեր Արայն առասպելական անձնաորութիւն մըն է, ինչպէս և Շամիրամն, չեմ կրնար ըսել թէ Պղատոնի Էրին հետ նոյն չէ. զի երկուքին մէջ ալ պատերազմի մէջ մեռնիլ և վերստին կենդանանալ կայ. որով ուրիշ ազբիւր մը կ'ենթադրուի :

Բ

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Վ Ա Ն Ա Յ Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր Ո Ի Թ Ե Ա Ն Յ Վ Ր Ա Յ

Այս յօդուածս թարգմանութիւն է՝ « Note on the Van inscriptions » խորագրով այն գրուածքին, որ հրատարակուեցաւ *Journal of the Royal Asiatic Society*, 1897, յուլիսի պրակին մէջ : Յօդուածազիրն է նոյն ինքն ծանօթ մասնագէտ և բանասէր Պր. Կ. Յ. Բասմաշեան, որուն սրամիտ անդրադարձութիւնքն և ուղիղ ըմբերցմունքն յատկապէս բեւեռագիր արձանագրութեանց, թէ ազգային և թէ եւրոպացի մասնագիտաց համակրանաց արժանացած է. իսկ Պարսիսու այս վերջին Արեւելագիտաց համաժողովոյն մէջ Դոկտ. Ստրիզովսկի և Պրոֆ. Սէյս մեծ գովեստով խօսեցան տաղանդաւոր բանասիրիս թիւզանդեան արձանագրութեան մի և Արմաւրի վանեան վերջին արձանագրութեան վրայ խօսած բանախօսութեանց նկատմամբ :

առաջինն եղաւ զժբազ Շուլցը՝ որ օրինակեց ու հաւարեց վանայ արձանագրութիւնները : Այս լի վրիպակներով ընդօրինակութեանց վրայէն ուսումնականք սկսան իրենց քննութիւնները : Մորքմանէն, Ռաբերտէն և Լընորմանէն ետքը՝ Պրոֆ. Սէյս կարգաց ու հրատարակեց, ըստ կարելոյն, թէ իւր և թէ իւր նախորդաց քննութիւնները :

Պրոֆ. Սէյս մեծ ծառայութիւն մատուցեց զիտութեան, Շուլցի ըրած ընդօրինակութիւնները Լէյարդի, Դէյրոլի և այլոց ըրած ընդօրինակութեանց հետ բաղդաստելով. քիչ մը աւելի ետքը Գ. Հ. Միլլէրին և Ս. Գիւյարին զիտողութեանց համեմատ, իրեն մէկ քանի վրիպակները ուղղեց : Գիւյար, բաց յայլոց՝ տարբերութիւն մը ևս զիտեք էր Ա-Լի-է բառին ընթերցման մէջ, զոր Պրոֆ. Սէյս կարգացրէր էր Ա-դա-է : Սակայն այս խօսքին իմաստը մի և նոյն կը մնայ, ինչ որ էր սկիզբները, այսինքն « կ'ըսես » :

Գրեթէ ամեն տեսակ բեւեռածն արձանագրութեանց սկիզբն, թէ Ասորեստան-Բա-

բելոնեան, թէ Շօշական, թէ Մարական
և թէ Աքեմենեան, հասարակ ձև մը կայ
(general formula), ինչպէս ակնհայտ X...
Ասորեստան-Բաբելոնացոց մէջ, ու X...
Շօշացոց և Մարաց մէջ, ադամ X...
Աքեմենեանց մէջ, և այլն:

Այս բանաձևը Հայաստանեան արձանա-
գրութեանց մէջ չի գտնուիր. բայց որովհետեւ
Ասորեստան-Բաբելոնեան արձանագրութեանց
մէջ կը գտնենք որ ակնհայտ անձնական գեր-
անունը պարբերութեանց վերջը կը գործա-
ծուի, և ուսումնականք կը հաստատեն թէ
Այրարամ-Նաիրիեանք իրենց գրութեան ոճը
ասորեստանցիներէն առեր են, մենք այս
հետեւանքը կը հանենք թէ հայ արձանա-

գրութեանց Ա-ԼԻ-Է բառը նոյն արժէքը
ունի, ինչ արժէք որ ունի Ասորեստան-
բաբելոնեան արձանագրութեանց ակնհայտ
անձնական գերանունը, Շօշացոց և Մարաց
ոչն և Աքեմենեանց ադամը, որ կը նշա-
նակէ «Էս»: Ուրեմն պէտք է թարգմանենք
այս հասուածը Argistiš, alie, haubi
𐎠 X, 𐎠𐎺𐎠 X) = «Էս Արգիշտի, Կիրեցի
երկրին X, քաղաքին X», ինչպէս կը
գտնենք ասորեստաներէն Անակոռ, 𐎠 X, ակ-
շուր մատ X, ադոռ X: Ի նպատակ այս
կարծեաց հոս մէկ քանի օրինակներ գտնենք
վանեան ձևեր Բաբելոնեանին հետ համե-
մատելով:

Վ Ա Ն Ե Ա Ն

Ա

Menuani Išpuiniehi,
erilaš¹ taraie,
erilaš alsuini,
erilaš ebanaue² Biaina(u)e,
alusi paumri³ Dhušpae.
Menuaš Išpu(i)nihiš,
A-LI-E, . . .⁴

Բ Ա Բ Ե Լ Ո Ն Ե Ա Ն

Ա

Hammurabi,
šar dannu,
šar Babilu,
šar muštešmi
kibratim arbaim
.
A-NA-KU.

(Հաստատութիւն?) Մենուաշայ իշպուի-
նեայ, հզօր արքայ, մեծ արքայ, արքայ եր-
կրին վանայ, իշխան Տոսայ: Մենուաշ
իշպուիիշեան, Էս :

Համմուրաբի, հզօր արքայ, արքայ Բա-
բելոնի, որ հնազանդեցոյց ինքեան գրա-
ռեակ նահանգս, . . . Էս:

Բ

Sardurini Argistihi,
erilas taraie,

Բ

Nabukudurriušur,
šar Babilu, . . .

1. Ես Էրիշտի կը կարգամ ((\llcorner) «արքայ»
գաղափարանշանն, ըստ նոր գիւտին Բարձր Գի-
տութեանց վարժարանին հմուտ ուսուցչիս, վեր-
ջ. Շէյլի, իւր «Մեղադիրտի վանեան արձանա-
գրութեան» մէջ, ի թերթին Rec. trav. Egypt.
et Assyr., XVIII.

2. Փոխանակս \llcorner , վանդի մենք կը գտնենք
 \llcorner Է-բա-նի, \llcorner Է-բա-նա, \llcorner Է-բա-նի-նա-
նա-ն, և այլն:

3. Մեղադիրտի արձանագրութեան մէջ կը
գտնենք, ինչպէս ցըցուց Պրոֆ. Շէյլը, \llcorner
Տու-ու-շ-պա-ա պա-ա դուպ-րի, փոխանակ
 \llcorner Տու-շ-պա \llcorner , որ այս քաղաքին յա-
տուկ մասնաւոր ձև մըն է. ուստի գտնենք միւ-
ջընելով կրնանք կարգով պարզուել կամ լաւ
ևս պատշաճի:

4. Հմտ. Schulz XIII, XIV, և XV, 4-10;
Sayce, XX.

erilaš alsuini,
erilas ebanaue Biainaue,
alusi paumri Dhušpa,
Sarduris, A-LI-E, . . .¹

palih Bel Beli, . . .
abal kini ša Nabupalušur,
šar Babilu,
A-NA-KU.

(Հաստատութիւն?) Մարգուրիշի Արգիշ-
տեայ, հզօր արքայ, մեծ արքայ, արքայ
երկրին վանայ, իշխան Տոսայ: Մարգու-
րիշ, Էս . . . :

Նարուգոգրոսոր, թագաւոր Բաբելոնի, . . .
երկրագուռ աստուծոյն աստուածոց, երէց
որդի Նարուպաղասարայ, արքային Բաբելո-
նի, Էս:

Վերը տուած օրինակներու մէջ արքայ
բառին կրկնութիւնը՝ ուրիշ արձանագրութեանց
մէջ ալ կը գտնուի անձնական գերանուն
առաջին դէմքով (Էս) գործածուած: Այսպէս

նոյնը կը գտնենք Շօշի մեծ արձանագրու-
թեան սկիզբն, որ «Սուարուկ-Նախունտէ»-ի
կը վերաբերի, և որ ամենէն աւելի նմա-
նութիւն ունի վանեան գրութեան.

Վ Ա Ն Ե Ա Ն

Sardurini Argistihi,
erilaš taraie,
erilaš alsuini,
erilaš ebanaue Biainaue,
alusi paumri Dhušpa.
Sarduriš, A-LI-E, . . .

Շ Օ Շ Ե Ա Ն

Ս Sutruk-Nahhunte šak Halluduš
an' in šušinak
gik libak
gik šunkik anzan šušunqa
an' in šušinak . . .
U Sutruk-Nahhunte . . .

Նոյն:

Էս Սուարուկ-Նախունտէ, որդի Հալու-
դուսի, արքայ Շօշացոց, հզօր Տէր, Տէր՝
որ տիրէ Շօշի երկրին: Արքայ Շօշացոց . . .
Էս Սուարուկ-Նախունտէ . . .³

Եթէ առարկուի որ «Ասաց Ք արքայն . . .»
ձևը Աքեմենեանց մէջ ալ գործածական է.
կը պատասխանենք, նախ՝ Աքեմենեանց ար-
ձանագրութիւնները իրենց օրինակ առնուլ:
Երկրորդ՝ ինչպէս վերը ցոյց տուինք՝ էական
գերանուն առաջին դէմքը միշտ կը գտնուի
Ասորեստան-բաբելոնեան, Շօշական, Մա-
րական և Աքեմենեան արձանագրութեանց
մէջ. եթէ այս վերջինս «Ասաց Ք արքայն . . .»

րարուի թագաւորութիւնը այս թագաւորիս
իշխանութեան ժամանակ կար, հետեւաբար
Ուրարտեանք չէին կրնար Աքեմենեանց ար-
ձանագրութիւնները իրենց օրինակ առնուլ:
Երկրորդ՝ ինչպէս վերը ցոյց տուինք՝ էական
գերանուն առաջին դէմքը միշտ կը գտնուի
Ասորեստան-բաբելոնեան, Շօշական, Մա-
րական և Աքեմենեան արձանագրութեանց
մէջ. եթէ այս վերջինս «Ասաց Ք արքայն . . .»

1. Հմտ. Mühlbach (Monatsb. Verh. Ge-
sellschaft. Erd. zu Berlin, 1841 pp. 70-75,
II. 32-34); Sayce, L.

2. Ընդօրինակութիւն և թարգմանութիւն
հուշակաւոր ուսուցչիս ի Collège de France,
Պրոֆ. Ուպպերտի:

3. Ըստ Բավիանի արձանագրութեան. սա-
կայն ըստ Պրոֆ. Ուպպերտի այս գրութիւնը չէ
ստուգուած, և պէտք է մերձաւորապէս Ք. Ա.
1250 տարւոյն ըլլայ:

2019 2456

« Ազգային գրադարան »

NL0060494

